ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

08 հոկտեմբերի 2020 թվական N 46 -Ա

**ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի ԹԻՎ 7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով , համայնքի ավագանին որոշում է ՝

1.ՀԱՍՏԱՏԵԼ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 08-Ի ԹԻՎ 7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՏԵՍՔՈՎ

1) ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2) ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 02-003-0244-0631 ԾԱԾԿԱԳՐՈՎ 8.1 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3) ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

4 )ՓՈՂՈՑԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

5)ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԵՐԵՎԱՆ-ԳՅՈՒՄՐԻ ՄԱՅՐՈՒՂԻ 50 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6) ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԵՐԵՎԱՆ-ԳՅՈՒՄՐԻ ՄԱՅՐՈՒՂԻ 51 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7) <<ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ >>26.12.2019թ. N-71-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից :

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ

3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԹԱՄԱՐԱ

4. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՐԱՏ

5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՇՈՏ

6. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

Ք.Թալին
08 հոկտեմբերի 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

08 հոկտեմբերի 2020 թվական N 47 -Ա

# ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի , ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ , 77-րդ , 78-րդ և 79-րդ հոդվածների և ՀՀ կառավարության 12.04.2001թ. N-286 որոշմամբ հաստատված կարգի VIII գլխի պահանջներով , համայնքի ավագանին որոշում է `

1.Ստեղծել համայնապետարանի մրցույթային հանձնաժողով , հետևյալ կազմով `

___Սարգիս Արամյան –հանձնաժողովի նախագահ / համայնքի ղեկավար /

___Արմեն Գրիգորյան –աշխատակազմի գլխ. մասնագետ

___ Արթուր Կարապետյան- աշխատակազմի առաջատար մասնագետ

___Անի Գասպարյան -աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ

___Արամ Արամյան –ավագանու անդամ

___Արարատ Գասպարյան –ավագանու անդամ

2.Աածուրդավար նշանակել `–Անի Գասպարյանին

3.Արձանագրող նշանակել ` Արթուր Կարապետյանին

4.Հաստատել հողամասերի վարձակալությամբ / կամ կառուցապատման իրավունքով / տրամադրելու մրցույթների կազմակերպման կանոնակարգը , համաձայն կից հավելվածի :

5.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից :

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ

3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԹԱՄԱՐԱ

4. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՐԱՏ

5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՇՈՏ

6. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ` Ս. ԱՐԱՄՅԱՆ

Ք.Թալին
08 հոկտեմբերի 2020թ.

Հավելված
Թալին համայնքի ավագանու
2020թ. հոկտեմբերի 08-ի N-47-Ա

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
## ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ / ԿԱՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ / ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1.Հողամասը վարձակալ կամ կառուցապատման իրավունքով տրամադրվում է մրցույթով ՝

2.Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալությամբ կամ կառուցապատման իրավունքով տրամադրվում է ՀՀ քաղաքացիներին , ՀՀ և օտարերկրյա իրավաբանական անձանց , օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց , ՀՀ կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձանց :

3.Մրցույթներն անցկացվում են բաց , որին մասնակցելու համար ցանկացողները յուրաքանչյուր լոտի համար առանձին ներկայացնում են հայտ , մասնակցության համար վճարի անդորրագիր և անձնագիր: Մրցույթի մասնակիցները վճարի մրցույթին մասնակցելու համար , դրա անցկացման օրը մուծում են նախավճար, հողամասի մեկնարկային վարձավճարի 5%-ի չափով , մրցույթն սկսվելուց առաջ :

4.Եթե մասնակիցը չի հաղթել մրցույթում , նախավճարի գումարը վերադարձվում է նրան , իսկ մրցույթում հաղթած անձի հետ պայմանագիր կնքելիս նրա մուծած նախավճարի գումարը հաշվարկվում է կնքված պայմանագրով պարտավորությունների կատարման հաշվում :

5.Մրցույթի մասնակցելու հայտերի ընդունումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից 3 աշխատանքային օր առաջ:

6.Մրցույթում հաղթած անձը արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու դեպքում կորցնում է մուծած նախավճարը , ինչպես նաև մրցույթը չկայանալու դեպքում զրկվում է հողամասը առանձ մրցույթի վարձակալելու կամ կառուցապատման իրավունքից :

Մրցույթում հաղթած է համարվում առավել բարձր վարձավճար և պայմաններ առաջարկած մասնակիցը :

7.Մրցույթում առաջարկված հավասար պայմանների դեպքում նախապատվությունը տրվում է համայնքի բնաչին կամ համայնքում գրանցված իրավաբանական անձին :

8.Մրցույթը կայանում է , եթե մասնակիցների թիվը մեկ կամ ավելի է :

9.Մրցույթը անցկացնելուց առնվազն մեկ ամիս առաջ կազմակերպիչը զանգվածային լրատվամիջոցներով կատարում է հրապարակային ծանուցում , որի մեջ նշվում է

-Մրցույթի անցկացման օրը, ժամը և հասցեն

-հայտերի ընդունման ժամերը

-մրցույթին մասնակցելու անհրաժշետ փաստաթղթերի ցանկը

-մրցույթում հաղթողին որոշելու կարգը

-մրցույթին մասնակցելու նախավճարի չափը , ինչպես նաև վճարելու կարգը և ժամկետները

-հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը

- հողամասի չափը և վարձակալության /կամ / կառուցապատման ժամկետը

-հողամասի գտնվելու վայրը , ծածկագիրը և վճարի մեկնարկային չափը

-հողզմասի օգտագործման նպատակը և հաղորդակցուղիների առկայությունը

-հողամասի նկատմամբ սահմանափակումների / ներառյալ սերվիտուտների / առկայությունը

ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

08 հոկտեմբերի 2020 թվական N 48 –Ա

# ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 02-003-0224-0631 ԾԱԾԿԱԳՐՈՎ 8.1 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ կետերով և ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 18.09.2020թ. N-1 / փ-87 դրական եզրակացությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հաստատել ք. Թալին Գայի փող . 86 հասցեում , գտնվող 02-003-0224-0631 ծածկագրի տակ գտնվող , <<Էներգոդաշտ >> ՍՊԸ- ի սեփականություն հանդիսացող 8.1 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը՝ գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքից, էլեկտրաէներգիայի, կապի ,կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության , էներգետիկայի գործառնական նշանակության հողերի :

2.Առաջարկել հողամասի սեփականատեր <<Էներգոդաշտ >>ՍՊԸ- ին եռամյա ժամկետում համայնքի բյուջե վճարել հողամասի նպատակային նշանակությունը փոխելու պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ (/ 81000 x 528 / - / 81000 x 23,75 / ) 40.844.250 /քառասուն միլիոն ութ հարյուր քառասունչորս հազար երկու հարյուր հիսուն / դրամ :

3.Թալին համայնքի ղեկավարին՝ <<Քաղաքաշինության մասին >> ՀՀ օրենքի 14.3–րդ հոդվածի 30-րդ մասի համաձայն, նշված փոփոխությունը արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և կատարել հողամասի նպատակային ու գործառնական նշանակության փոփոխության պետական գրանցում :

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից :

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԹԱՄԱՐԱ
4. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՐԱՏ
5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՇՈՏ
6. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱՐԱՄՅԱՆ

Ք.Թալին
08 հոկտեմբերի 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

08 հոկտեմբերի 2020 թվական N 49 –Ա

# ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով , <<Բյուջետային համակարգի մասին >> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով , համայնքի ավագանին որոշում է `

1.Ընդունել ի գիտություն Թալին համայնքի ղեկավար Ս. Արամյանի հաղորդումը համայնքի բյուջեի 2020թ. երրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին , համաձայն կից հավելվածի :

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից :

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ

3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԹԱՄԱՐԱ

4. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՐԱՏ

5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՇՈՏ

6. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

Ք.Թալին
08 հոկտեմբերի 2020թ.

ՀԱՎԵԼՎԱԾ
Թալին համայնքի ավագանու
2020թ. հոկտեմբերի 8-ի N 49-Ա որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020թ. 3-րդ եռամսյակի բյուջեի եկամուտների և ծախսերի կատարման

| N | Եկամուտների անվանումը | Տարեկան պլան | 3-րդ եռամսյակի պլան | Փաստացի | % |
|---|---|---|---|---|---|
| 1 | Գույքահարկ | 35100.0 | 8775.0 | 6759.5 | 77.0 |
| 2 | Հողի հարկ | 5800.0,0 | 1450.0 | 1347.8 | 92,9 |
| 3 | Պետ/տուրք | 5000,0 | 1250.0 | 1238.4 | 99.1 |
| 4 | Տեղ. տուրք | 4000,0 | 1000.0 | 1014 | 101.4 |
| 5 | Այլ եկամուտներ | 27372,1 | 6843.0 | 6918.9 | 101.1 |
| 5,1 | Գույքի և հողի վարձակալություն | 4000.0 | 1000.0 | 1176.7 | 117.7 |
| 5,2 | Պետ. կողմից պատվիր. լիազ. | 5354,1 | 1338.5 | 912.4 | 68.2 |
| 5,3 | Այլ եկամուտներ | 2518,1 | 630.0 | 1883.4 | 299.0 |
| 5,4 | Տեղական Վճարներ | 15500,0 | 3875.0 | 2946.4 | 76.0 |
| 6 | Դոտացիա | 128045,2 | 32011.2 | 29790.9 | 93.1 |
| 6.1 | Այլ դոտացիա | 18355.9, | 4588.7 | 2369.0 | 51.6 |
| 6.2 | Սուբվենցիա | 3500.6 | 875.0 | 874.8 | 100 |
|  | Ընդամենը եկամուտներ | 205317.3 | 51329.3 | 47069.1 | 91.7 |
| 7 | Ծախսեր | 205317.3 | 51329.3 | 46152.4 | 89.9 |
| 7.1 | Կառ. ապարատ | 54064.3 | 13516.0 | 12424.5 | 91.6 |
| 7.2 | Ընդհանուր բնույթի ծառայություններ | 5644.0 | 1411.0 | 1203.6 | 85.3 |
| 7.3 | Այլ ծառայություններ | 145609.0 | 36402.2 | 32524.3 | 89.3 |

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԹԱՄԱՐԱ
4. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՐԱՏ
5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՇՈՏ
6. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

08 հոկտեմբերի 2020 թվական N 50–Ա

## ՓՈՂՈՑԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, համայնքի ավագանին որոշում է՝

1. Թալին քաղաքի Անդրանիկի փողոց 1-ին նրբանցքը վերանվանել Ռ. Լևոնյան փողոց 1-ին նրբնացք :

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից :

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԹԱՄԱՐԱ
4. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՐԱՏ
5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՇՈՏ
6. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱՐԱՄՅԱՆ

Ք.Թալին
08 հոկտեմբերի 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

**08 հոկտեմբերի 2020 թվական N 51–Ա**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԵՎԱՆ-ԳՅՈՒՄՐԻ ՄԱՅՐՈՒՂԻ 50 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ կետերով , հիմք ընդունելով ՀՀ կառավարության 30.11.2006թ. N-1728-Ն որոշումը << ՀՀ Արագածոտնի մարզի Թալին քաղաքային համայնքի / բնակավայրի / գլխավոր հատակագիծը հաստատելու մասին>> ,

**համայնքի ավագանին որոշում է ՝**

**1.**Թալին քաղաքի Երևան-Գյումրի մայրուղի 50 հասցեում գտնվող 02-003-0207-0053 ծածկագրով 1.739 հա հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքից բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողերի :

2.Թալին համայնքի ղեկավարին ՝ << Քաղաքաշինության մասին >> ՀՀ օրենքի $14^3$ հոդվածի 30-րդ մասի համաձայն նշված փոփոխությունը արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և կատարել հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության պետական գրանցում :

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից :

| Կողմ-6 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |
|---|---|---|

1. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ

3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԹԱՄԱՐԱ

4. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՐԱՏ

5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՇՈՏ

6. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

Ք.Թալին
08 հոկտեմբերի 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

08 հոկտեմբերի 2020 թվական N 52–Ա

# ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԵՎԱՆ-ԳՅՈՒՄՐԻ ՄԱՅՐՈՒՂԻ 51 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ կետերով , հիմք ընդունելով ՀՀ կառավարության 30.11.2006թ. N-1728-Ն որոշումը << ՀՀ Արագածոտնի մարզի Թալին քաղաքային համայնքի / բնակավայրի / գլխավոր հատակագիծը հաստատելու մասին>> ,

**համայնքի ավագանին որոշում է՝**

1.Թալին քաղաքի Երևան-Գյումրի մայրուղի 51 հասցեում գտնվող 02-003-0207-0054 ծածկագրով 0.1 հա հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքից բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողերի :

2.Թալին համայնքի ղեկավարին ՝ << Քաղաքաշինության մասին >> ՀՀ օրենքի $14^3$ հոդվածի 30-րդ մասի համաձայն նշված փոփոխությունը արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և կատարել հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության պետական գրանցում :

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից :

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ

3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԹԱՄԱՐԱ

4. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՐԱՏ

5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՇՈՏ

6. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

Ք.Թալին
08 հոկտեմբերի 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

08 հոկտեմբերի 2020 թվական N 53–Ա

<<ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ >>26.12.2019թ. N-71-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 33-րդ և 37-րդ հոդվածներով , <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով , հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը , համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Թալին համայնքի 2020թ. տարեկան բյուջեն

-----եկամուտների մասով - 205317,3 հազ. դրամ

-----ծախսերի մասով - 205317,3 հազ. դրամ

----հավելուրդի մասով - 41099,0 հազ. դրամ

2.Թալին համայնքի ավագանու 26.12.2019թ. <<Թալին համայնքի 2020թ. տարեկան բյուջեն հաստատելու մասին >> N-71-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ համաձայն հավելվածի :

3.Հաստատել Թալին համայնքի 2020թ. տարեկան բյուջեն կատարված փոփոխություններով համաձայն 1-6 հատվածների :

4.Ուժը կորցրած ճանաչել Թալին համայնքի ավագանու 27.07.2020թ. N-42-Ա որոշման 2-րդ և 3-րդ կետերը :

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից :

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ

3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԹԱՄԱՐԱ

4. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՐԱՏ

5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՇՈՏ

6. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱՐԱՄՅԱՆ

Ք.Թալին

08 հոկտեմբերի 2020թ.

Հավելված
Թալինի քաղաքային համայնքի ավագանու

2020 թ. հոկտեմբերի 8 -ի թիվ 53 - Ա որոշման

ա)2020թ. տարեկան ճշտված բյուջեի եկամտային մասում կատարել հետևյալ փոփոխությունները

| Անվանումը | Տարեկան հաստատված բյուջեով | Կատարված փոփոխություն | | Տարեկան ճշտված բյուջե |
|---|---|---|---|---|
| | | ավելացում | պակասեցում | |
| Հողի օտարում | 115000,0 | 66000,0 | | 181000,0 |
| Գույքի օտարում | 1000,0 | 5000,0 | | 6000,0 |

բ)2020թ. տարեկան ճշտված բյուջեի ծախսային մասում ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման

| Անվանումը | Տարեկան հաստատված բյուջեով | Կատարված փոփոխություն | | Տարեկան ճշտված բյուջե |
|---|---|---|---|---|
| | | ավելացում | պակասեցում | |
| Կառավարման ապարատ 01.1.1 4111 | 38282,0 | | 744,0 | 37538,0 |
| Կառավարման ապարատ 01.1.1 4112 | 5182,0 | 444,0 | | 5626,0 |
| Կառավարման ապարատ 01.1.1 5113 | 17000,0 | | 750,0 | 16250,0 |
| Կառավարման ապարատ 01.1.1 5122 | 1500,0 | | 679,0 | 821,0 |
| Կառավարման ապարատ 01.1.1 5129 | 950,0 | | 950,0 | 0,0 |
| Կառավարման ապարատ 01.1.1 5132 | 650,0 | | 350,0 | 300,0 |
| Ընդհանուր բնույթի հանրային ծառայութ.01.6.1 5113 | 55918,0 | | 18918,0 | 37000,0 |
| Ընդհանուր բնույթի հանրային ծառայութ.01.6.1 5122 | 1500,0 | | 1500,0 | 0,0 |
| Ընդհանուր բնույթի հանրային ծառայութ.01.6.1 5134 | 5792,0 | | 595,0 | 5197,0 |
| Քաղաքացիական պաշտպանություն 02.2.1 4239 | 100,0 | | 100,0 | |
| Քաղաքացիական պաշտպանություն 02.2.1 4267 | 250,0 | 400,0 | | 650,0 |
| Ճանապարհ.տրամնսպորտ 5113 | 70764,0 | 99236,0 | | 170000,0 |
| Ճանապարհ.տրամնսպորտ 5129 | 950,0 | | 950,0 | 0,0 |
| Ջրմայջի խաղահրապարակներ 08.1.1 5113 | 5000,0 | | 5000,0 | 0,0 |
| Արտաքին լուսավորություն 06.4.1 5113 | 7500,0 | 1501,0 | | 9001,0 |

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ

3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԹԱՄԱՐԱ

4. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՐԱՏ

5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՇՈՏ

6. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱՐԱՄՅԱՆ